

ԴԻՅԱԲԱՆԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԴԻՅԱԲԱՆԻ ՏՕՆԵՐԸ

Հետաքրքրական են Համբարձման եւ Վարդավառի տօների օրերի զուգահեռները. այն է՝

Համբարձում

- 620թ. Նաւասարդ 4 = Յունիս 27
- 621թ. Նաւասարդ 17 = Յունիս 10
- 622թ. Նաւասարդ 19 = Յունիս 2
- 623թ. Նաւասարդ 1 = Յունիս 24

Վարդավառ

- 620թ. Նաւասարդ 13 = Յունիս 6
- 621թ. Նաւասարդ 26 = Յունիս 19
- 622թ. Նաւասարդ 18 = Յունիս 11
- 623թ. Նաւասարդ 10 = Յունիս 3

Պարզուում է, որ վերոյիշեալ հատուածի սահմի 7ը Ագաթանգեղոսի Պատմութեան մէջ ընդմիջարկութիւն է եւ համընկնում է այդ Պատմութեան ընդարձակ խմբագրութեան ժամանակի հետ:

Բացայայտուում, լուսաբանուում է միւս հակասութիւնը եւ բացատրելի դառնում Յովհաննէս Մկրտչի միւս տօնի օրը տարուայ կտրուածժով եւ պարզ է դառնում, որ այն յաճախ համընկել է Համբարձման եւ Վարդավառի տօների օրերին: Յովհաննէս Կարապետի միւս տօնը եղել է «Նոր պտղոց տօնին», որը ինչպէս նշել է Ն. Ակիմեանը, հարեւան եկեղեցիները տօնում էին Յունիս 24ին (Ն. Ակիմեան, անդ էջ 103): Համադրելի են դառնում Յովհաննէս Մկրտչի եւ Աստղիկի տօնի օրերը, այն է՝ Յունիս 24ը, որը տարբեր է հայոց շարժական տոմարից ամիս-ամսաթուերով: Նոյնպէս շատ բնականոն է, երբ նկատի ենք ունենում հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթուերի տեղաշարժը: Յովհաննէս Կարապետի երկրորդ տօնի օրուայ

բացայայտուումը հնար է տալիս անդրադառնալ «Բուզանդարան պատմութիւնք»ի (Փ. Բուզանդի Հայոց Պատմութիւն) հետաքրքրական վկայութեանը: Այնտեղ գրուած է, որ Բագարանում կատարուող տօնախմբութիւնը, որն այդ տարի համընկել է Գնելի սպանութեան հետ, տեղի էր ունենում «Նաւասարդաց ժամանակոք»: «Նաւասարդաց ժամանակոք»ը համադրուել է Յովհաննէս Մկրտչի յիշատակի օրուայ հետ, որն այդ տարի կատարուել է Կիրակի օրը: (Ն. Ակիմեանը ճիշտ է կռահել, որ Յովհաննէս Կարապետի յիշատակի օրը անշարժ պէտք է լինէր, որ համընկնէր՝ շարաքուայ օրերի հետ, որոնց թուում Կիրակի օրուայ. այն է եղել Յունիսի 24ի տօնի օրը:)

Պարզուում է որ, «Նաւասարդաց ժամանակոք» տօնը ոչ թէ կապուել է Նաւասարդ ամսանուան հետ, որն անընդհատ շարժուում էր տարիների կտրուածժով համեմատած արեւային տարուայ կամ Յուլեան ամիս-ամսաթուերի հետ, այլ ամառային տօների հետ, որոնք անուանուում էին ամառորեան-նաւասարդեան տօներ: Ինչպէս վերը տեսանք այն ամմիջական առնչութիւն ունէր Աստղիկի տօնի օրուայ հետ: Ստորեւ կը տեսնենք, որ ամառորեան տօների հետ էին կապուած նաեւ Տիրի, Վանատուրի, յատկապէս Ամանորի հանդիսամբները, տօնախմբութիւնները: Վերջինս կարող էր լինել Արտնիսի հայկական տարբերակը, որը մտնում արա յարութիւն էր առնում իբրեւ Ամանոր: Հարկ է նշել, որ մեր կողմից 550ական թուականներով թուագրուող, թեւ Սահակ Կաթողիկոսին

վերագրուող, սակայն իրականում Ներսես Կաթողիկոսի եւ Ներշապուհ Բայկապուհ կողմից գրուած կանոնական թղթերում վկայուել է «տաւն վախճանելոցն յՆլս հրոտից ամսոյն» (Կանոնագիրք Հայոց, հ. Ա. Ե. 1964, էջ 348), որն այդ ժամանակ կատարուում էր Յուլիանի սկզբներին: Այդ տօնը նայած տարուան ընկնում էր «տաւն Ամբառնայոյ Տեառն յերկինս», այսինքն Համբարձման եւ Վարդավառի միջեւ ընկած ժամանակահատուածում, յաճախ համընկնում էր վերջիններսիս եւ նուիրուել է ընդհանրապէս վախճանածնների յիշատակին: Այն գալիս է վաղ շրջանից, խորընկալ արմատներ ունի: Թեւեւ այն մտել է հայոց քրիստոնէական Տօնացոյց իրրեւ վախճանածնների յիշատակի օր, սակայն յատկապէս վերաբերում է Ամանոր-Աղոնիսին, որը մեռնելով յարութիւն էր առնում: Հետագայում այս տօնը հայոց քրիստոնէական Տօնացոյցի մէջ տարալուծուեց եւ տեղափոխուեց Տաղաւարաց անուանուող տօների երկուշաբթին: Ամանորի տօնի հիմնաւորումը, հաւաստութիւնը գտնում ենք նաեւ Վանատուրի օրը որոշելով: Մակարայեցոց Բ գրոց մէջ, ինչպէս նշել է Ղ. Ալիշանը, յունական Դիոս Քսենիոսը թարգմանել է «Եւրաստր Որմզդական դիցն Վանատրի» (Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վնեստիկ, 1895, էջ 256): Հայոց տոմարի օրանունների մէջ Վանատուրի օրը համարուել է 14րդը: Հայոց շարժական տոմարի սկզբնական տարիները կտրուածով ամանորեան-Նաւասարդեան տօները, որոնք համընկել են Ամանորի եւ Վանատրի օրերի հետ ընկնում էր Տրէ ամսին, ռուտի Տրէ 14ով կը ստանանք Վանատրի տօնի օրուայ Յուլեան համարժէքը, այն է Յուլիս 1ը: Միանգամայն ընդունելի ամաթիւ, որը համընկնում է Նոր պտղոց տօնի օրերի հետ: Ամանոր-Աղոնիսի եւ Վանատուրի

պաշտամունքի հետեւերը պահպանուել են Համբարձման եւ Վարդավառի տօների մէջ: Դրանք այլ խնդրոյ առարկայ են եւ կ'անդրադառնանք այլ առիթով: Կասկած չի կարող յարուցել այն, որ Գրիգոր Մագիստրոսի վկայած ներէոյիշեալ հաստուածը՝ կապուած Արտաշէսի վախճանի հետ վերաբերում է ամանորեան-նաւասարդեան տօների, այսինքն ամրան սկզբի Նոր պտղոց տօների հետ:

Ո տայր ինձ գծուի ծխանի

Եւ գառաւուսն Նաւասարդի,

Ձվագնել եղանց

Եւ զվա(ր)գել եղջերուաց

Մեք փող հարուաք

Եւ (գ)թմբկի հարկանէաք

(Գր. Մագիստրոս, թղթեր, էջ 87, Ն. Ալիքեան, անդ, էջ 112):

Հետաքրքրական է Տիր աստծու տօնի օրը որոշելու խնդիրը: Փորձանք սահմանել այդ տօնի օրը եւ ապա ընթերցողի ուշադրութիւնը իրաւորեմք ամառնամուտի տօնական շարքի մասին մեր հետեւութեանը: Տիր աստուածը բնութագրուել է որպէս «երազացոյց երազահան Տրի դից, դպիր գիտութեան քրմաց, անուանեալ դիւան գրչի Որմզդի, ուսման քարտարութեան մեհեան»: Տիրը համադրուել է Ապոլինի հետ: Ուսումնասիրողները Տիր աստծու անուան հետ են կապում Տրէ ամսանունը: Այնպայտ է, որ Տիրի տօնը կատարել են Տրէ ամսին, որը տարուայ կտրուածով պարբերաշրջանի սկզբին սկսուել էր Յունիսի 18ից եւ աւարտուել Յուլիս 17ով: Միաժամանակ հայոց օրանունների մէջ Տիր աստծոյ հետ կապուել է 11րդ օրը, քանի որ իմաստի առումով աւելի հաւանական է, որ երեզական - երեզեան օրանունը համադրուի Տիրի հետ: Ինչպէս յայտնի է Տիրը նաեւ երազացոյց-երազահան էր այսինքն օրանունն իր մէջ ամփոփում է Տիրի դերերից մէկը: Հետեւաբար կարելի է ընդունել, որ Տիրի տօնի օրը համընկել

է Տրէ 11ին, որը վերածելով Յուլեան տոմարի կը ստանանք Յունիսի 28ը: Պարզուում է, որ Տիր աստծու տունը կատարել են Յունիսի վերջերին, որը կապուում է հայոց քրիստոնէական Տօնացոյցում սահմանուած թարգմանչաց տօնի հետ: Պարզ է դառնում նաեւ, որ Սահակ Կաթողիկոսը եւ Մաշտոց վարդապետը Տիր աստծու տունը փոխարինել են թարգմանչաց տօնով: Տիր աստծու տօնի հիմնական կենտրոնն էր Վաղարշապատից Արտաշատ տանող ցանապարհի մօտ գտնուող մեհեանը:

Այսպիսով առկայ միւթերը ցոյց են տալիս, որ Ամանորեան-Նաւասարդեան տօնական օրերն սկսուել են ամառամուտի սկզբներով՝ Յունիս 24ով եւ ւարտուել Յուլիսի սկզբներին, տուել ակնբերաբար 10 օր: Այդ օրերի քանակը պահպանուել է Համբարձման-Վարդավառի տօնական օրերի մէջ: Վերջիններս ինչպէս յայտնի է տեղի էին ունենում Պենտեկոստէից յետոյ քառասներորդ եւ յիններորդ օրը (= 10 օր): Ամանորեան-Նաւասարդեան նոր պտոզոց տօները մուիրուած են եղել Աստղիկին, Ամանորին, Վանատուրին եւ Տիրին: Նրանց տօների մնացուկները պահպանուել են Հայոց քրիստոնէական Տօնացոյցից յայտնի սրբոց եւ Հարձման-Վարդավառի տօնական շրջանի մէջ, որոնք թէւ շարժական էին, սակայն հիմնականում կատարուում էին Յունիս-Յուլիս ամիսներին: Հետագոտողները կասկած չունեն, որ հայոց հեթանոսական դիցարանում Միհրը արեւի աստուածն էր: Միհրը համադրուել է իրանական Միթրա-Միհրի, սեմական-առաջաւոր ասիական Բարշալիմայի եւ Հեփեսոսի հետ:

Առաւել դիւրին, լուծելի է Միհրի տօնի օրուայ խնդիրը: Ուսումնասիրողները գտնում են, որ Մեհեկան ամսամուտը կապուած է Միհրի անուան հետ: Հայոց

օրանունների մէջ Միհրի օրը եղել է ութերորդը: Վերոյիշեալ տուելանքից կարելի է հետեցնել, որ Միհրի տօնի օրը Մեհեկանի Յին էր, որը Յուլեան տոմարով համարժէ էր Սեպտեմբեր 23ին: Հայոց տոմարին մուիրուած բնագրերից յայտնի է, որ աշմանային հասարակը կամ գիշերահաւասարը եղել է Սեպտեմբերի 22-23ին: Դժուար չէ յանգել այն հետեւութեան, որ Միհրի տօնի սկիզբը համապատասխանել է աշմանային գիշերահաւասարի օրուան: Միհրի տօնի օրուայ համար ստանում ենք միանգամայն բնական տեղ արեւային տոմարի մէջ: Եթէ մկատի ունենանք, որ Արամագղի տունը կատարուում էր գարնանային գիշերահաւասարի օրը ապա Միհրի տօնը իրրեւ արեւի աստուած պէտք է համընկներ աշմանային գիշերահաւասարի օրուայ հետ: Նրա օրերը համադրելի են Սուրբ Խաչի տօների օրերի հետ: Վատմիւր անուան յիշատակութեամբ ասես այդպիսի մի ակնարկ ունի Թովմա Արծրունին, երբ պատմում է Ռշտունեաց ռուսանից Խաչափայտը գողանալու մասին (Թ. Արծրունի. Գ, Ի, էջ 378, Թ. Ավդալբեգեան, Միհրը հայոց մէջ, Հայագիտական հետազոտութիւններ, Նրեան, 1965, էջ 64-65): Միհրի տօնի կատարման հիմնական կենտրոնն էր Դերջան գաւառի Բագայոյին գիւղը, որտեղ գտնուում էր նրա մեհեանը: Միհրի պաշտամունքի հետքեր, ինչպէս ցոյց է տուել Թ. Ավդալբեգեանը հետագայում գրանցուել են Վասպուրականում, Սիւնիքում եւ Արցախում: Կասկածից վեր է, որ Միհրին զոհաբերուող ճիւղը զոհում էին նրա տօնի օրը: Պատահական չեն Միհրի պաշտամունքի հետքերը նաեւ խաչքարերի վրայ, ինչպէս եւ «Սասնայ Մոռեք» էպոսի առասպելական կերպարներում: Մեծ եւ Փոքր Մեհրները Միհրի պաշտամունքի հետագայ դրսևորումներն էին:

Այսպիսով միջնադարեան սկզբնադրիւրների վկայութիւնների, յատկապէս Քրիստոնէական տօների համադրութեան հիման վրայ ստանում ենք Հայաստանի նախաքրիստոնէական դիցարանի տօնական տարուայ հիմնական պատկերը, այն է՝ Արամազդ = Նաւասարդ 15 = ապրիլ 3 = լուսնի առաջին լրման օր = լուսնի 19-ամեայ պարբերաշրջանի առաջին տարի (= ապրիլ 4) = ապրիլի սկիզբներ: Վահագնի համար ստանում ենք երկու տարբերակ՝ Ա. Սահմի 6 = մայիս 24 = Ելաստեղի երեւալու օրը, Բ. Սահմի 27 = Յունիս 14: Նախընտրելի ենք համարում երկրորդ տարբերակը՝ Ամանորեան-Նաւասարդեան տօներ, որոնց թուում Ա. Աստղիկ = Տրէ 7 = Յունիս 24 = ամառնամուտ: Բ. Ամանոր (մեռնող եւ յառնող) = Յունիսի վերջեր - Յուլիսի սկզբներ, Գ. Տիր = Տրէ 11 = Յունիս 28 Դ. Վանատուր = Տրէ 14 = Յուլիս 1: Ամանորեան-Նաւասարդեան նոր պտղոց տօները տեւում էին 10 օր. սկստում էին Յունիսի վերջերից, աւարտում Յուլիսի սկզբներին: Միւր = Մեհեկան 8, Մեպտեմբեր 23 = աշմանամուտ = աշմանային գիշերահաւասարի օր:

Գրաւոր աղբիւրները ցոյց են տալիս, որ հայոց նախաքրիստոնէական դիցարանի տօնական տարին հիմնուած է եղել արեգակնային տոմարական տարուայ վրայ, որ տօները՝ աստուածներին նուիրուած տօնախմբութիւնները հիմնականում անշարժ կերպով են տօնուել, չնայած հայոց շարժական տոմարի սկիզբունքնալով գարնանամուտը, ինչպէս եւ քնական տարուայ միւս հիմնակետերը (ամառնամուտ, աշմանամուտ եւայլն): Արեւային տօմարական տարին շաղկապուել է լուսնային ամիսների հետ Ամահիտի տօնով, որը համապատասխանել է լուսնի առաջին լրման օրուայ հետ: Հետագայ ուսումնասիրութիւնները հնարաւորութիւն կ'ընձեռեն պարզել տօնական տարուայ միւս ամաթուերը, որոնք անկասկած կապուած են եղել միւս աստուածների (Նանէ, Բարշամ եւն), ինչպէս եւ նախնիների, թագաւորների եւ այլ բնոյթի պաշտամունքների հետ:

(Վերջ)

ՌԱՏԱՅԵՆՆ ՎԱՐԴԱՆՆԱՆ,  
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԱՆՆԱՆ,  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՆՆԱՆ